ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » _____ 2024 թ. **N -Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԶԱՐՈՒՀԻ ՓՈՍՏԱՆՋՅԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Վաղաժամկետ դադարեցնել Զարուհի Համազասպի Փոստանջյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆ**
ՆԱՏԱԼՅԱ ՍԻՆՈՐՅԱՆ
ՄԱՐԱՏ ԹՈԽՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԼԵՎՈՆ ԼԵՎՈՆՅԱՆ
ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ
ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ
ԱՐՄԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԶԱՐՈՒՀԻ ՓՈՍՏԱՆՋՅԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1 արձանագրության համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու անդամի մանդատը տրվել է ավագանու Մայր Հայաստան կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի թեկնածու՝ Զարուհի Համազասպի Փոստանջյանին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու անդամը պարտավոր է մասնակցել ավագանու նիստերին:

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ ընդունված Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 71-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ բաց քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային համակարգով՝ տասը վայրկյանի ընթացքում, բացառությամբ Օրենքով կամ նույն կանոնակարգով նախատեսված դեպքերի:

Հարկ է նշել, որ նստաշրջանի ընթացքում, բոլոր քվեարկությունները անցկացվել են բաց, իսկ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության 31.01.2024 թվականի N Ն/5195-24 գրության համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու 5-րդ գումարման առաջին նստաշրջանի ընթացքում (2023 թվական) տեղի են ունեցել թվով 4 նիստեր, որոնց ընթացքում կազմակերպվել են թվով 42 քվեարկություններ: Նույն գրության համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու անդամ Զարուհի Փոստանջյանը մասնակցել է թվով 0 քվեարկությունների, այսինքն՝ նստաշրջանի ընթացքում բացակայել է քվեարկությունների կեսից ավելիից, իսկ բացակայությունները հարգելի համարվելու վերաբերյալ տվյալներ Երևանի քաղաքապետարան չեն ներկայացվել:

Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկվում է վաղաժամկետ դադարեցնել Երևան քաղաքի ավագանու անդամ Զարուհի Համազասպի Փոստանջյանի լիազորությունները:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆ
ՆԱՏԱԼՅԱ ՍԻՆՈՐՅԱՆ
ՄԱՐԱՏ ԹՈԽՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԼԵՎՈՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ
ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ
ԱՐՄԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ